էլ հեղնանքով եւ ատելութեամբ լեցուն, հոգիները տակնուվրայ էր անում եւ յոյսի դրօշակները լայն բացում:

Նա սիրում էր հայերին: Կաֆէ Լիրիկը բընական էր գտնում: Մեզ էլ խորհուրդ էր տալիս ընդհանուր լեզու գտնել: Տաճկահայկական հարցը, ասում էր նա, կը լուծուի այն ժամանակ, երբ ցարական ռեժիմը կը տապալուի:

Համեստ, ինքը իրեն մէջ քաշուած մարդ էր: Քիչ պահանջներով, ժուժկալ, բնական՝ բոլոր իր ձեւերի մէջ:

Պլէն Պալէի մօտ մի փոքրիկ ճաշարան կար, ուր 75 սանթիմով համեստաբար ուտում էինք: Երբեմն գալիս էր մեզ հետ, ճաշում էինք միասին եւ հացի հետ կլլում իր ամէն մի խօսքը:

Մի օր էլ Միխա Ցխակայան կամաց դուռս ծեծեց, ականջիս խորհրդաւոր բաներ ասեց եւ Լենինի որոշումները յայտնեց:

Փարիզում Լիտվինովի հետ ժողովներ արինք:

Գնացինք:

Մինխէնի բանտի տաժանելի օրերը եկան: Կախաղանի ուրուականը:

Ու մէկ ու կէս տարի յետոյ, վերջին տեսակցութիւնը Լենինի հետ Փարիզում, Avenue d'Orleans-ի մի փոքրիկ սրճարանում, վերջին ճաշը...

* * *

Այսօր, մի կտոր մարդ, օղիի եւ սիֆիլիսի ճիրաններին տակ սեղմուած, ոտքերը նետել է աթոռի վրայ, ձեռքը ատրճանակի վրայ դրել եւ ասում է ինձ.

— Դո՛ւք, հակայեղափոխականներդ, ազգայնամոլ հայ մտաւորականներդ, Լենինը չէք կարող հասկանալ:

Իսկ Լենինը կանգնել է Աբովեան փողոցի մէջտեղը եւ քարացած աչքերով նայում է հայերին:

Բարե՛ւ:

* * *

Ամէն երեկոյ, գրեթէ նոյն ժամին, օրուայ ծանր բեռը իրենց ծռած ուսերի վրայ, վիրաւոր եւ մելամաղձոտ մշակների պէս, ներս են մտնում Մարգար աղայի «Նայիրի» սրճարանը, մի քանի մտաւորականներ:

Խօսում են դէսից-դէնից...

Վերջալոյսի մօտ, Արարատեան դաշտից բոցեր են սողում եւ անցնող մարդկանց երեսին խոր կնճիռներ դնում: Ամէն ինչ լուռ է եւ ամէն ինչ յաւիտենական զգացումների անյաղթելի կնիքն է կրում:

Խօսում են ցած՝ դէսից-դէնից, չարտայայտուած տրտունջի շեշտը համրիչի գլորակների նման մէկիկ-մէկիկ վար ձգելով, զգուշօրէն պատցնելով խօսքերի շուրջը, խուլօրէն համեմելով մի ինչ որ թոյն, ճակատագրականօրէն ապրելով անապատելի, բայց անհրաժեշտ վայրկեաններ:

Ես սիրում եմ նրանց, մի քիչ այնպէս, ինչպէս սիրում են պառաւած, աղջիկ մնացած քրոջ, որովհետեւ նրանք մարդկութեան սիրուն յիշատակների հետ են կապուած:

Հսկայ երկրաշարժից յետոյ, աշխարհը ցնցող տարերային ուժի առջեւ, նրանք մնացել են կուչ եկած, անզօր եւ խեղճ, ինչպէս բուք ու բուրանի դիշերը ախոռի մէջ մեքենաբար որոճող նստած կովերը:

Քանդուած տան փլատակների վրայ, ժամադիրքը կորցրած քահանայի պէս, նրանք կանգ են առել խոնարհ եւ կուրացած աչքերով:

* * *

Ամեռը 5-ից յետոյ, Աբովեան փողոցից քիչ մարդ է անցնում: Ցուրտ է: Կովերը վաղուց կանգ են առել իրենց դրան առջեւ բառաչելով: Խանութների ներսը աղօտ լոյսեր են վառուել: Նազարեան փողոցի կոյրը նորից ըսկըսել է իր սրինգը նուագել, տարօրինակ տխրութիւն սփռելով այս տխուր երկրի վրայ:

Ներս է մտել Մ-ն, մաշած, դեղնագոյն վերարկուն ուսերին, ամերիկեան տիւկից գընած գլխարկով, մազերը թափթփուն, թոքախտաւորներին յատուկ, անբնական մի փայլ աչքերի մէջ:

Ձեռքէ ձեռք անցած գրքի պէս դեղնած, փոշիներին վարժ եւ միշտ նոյն էջի վրայ ծալուած՝ Մ-ն պահել է ինքնայատուկ մի դիմադիմ: Շատ գիրք է տեսել: Ուրիշների գաղափարների մէջ նա ապրում է, ինչպէս վարձու, կահաւորուած սենեակի մէջ: Ոչ մի սեփականութեան տէր է, ոչ մի մտքի:

Ռուսահայ մտաւորականը կաղապարուած, միակողմանի եւ ժան գաղափարներ այցելած